

գրի մէջ գրուած է ձեր պէմքի գծադիրը, ինչ տեսակ աչքեր ունէք, ինչ տեսակ ականջներ, բիթ, հատակ, և այլն, բայց չը կայ ձեր գեղեցկութեան նկարագիրը. չի գրուած «բէ գեղեցիկ եք»։ Այսպէս նայելով անցադիրն ես նմանութիւն չեմ գտնում ձեր ընդհանուր գեղեցկութեան պիմագծութեան մէջ։

— Երեւի կարգալ չգիտէք։

— Ի՞նչպէս չէ, թիւ գրել էլ գիտեմ։

— Եթէ գիտէք, ինչպէս էք անցադիրը գլխի վայր բռնել, կամ ի՞նչ կեղծ առարկութիւն է այդ, ապացոյցեցէք անցադրիս անհակական լինելը։

— Ես միայն զանազանութիւնը տեսնում եմ գեղեցկութեան մասին, որի համար բառ չկայ այստեղ։

— Ի՞նչ բառ էք ուզում, որ լինի։

— Օրինակ՝ անցադրում բոլոր յիշուածները նման են և իսկ, բայց գրողը սխալուել է, չէ գրել «գեղեցիկ» բառը։

Հրապարակով ծաղրեցի պաշտօնեային՝ բարձր բրքի՛ն արձակելով։ Կուշտ ծիծաղեցին և մեզ շրջապատող մարդիկը պաշտօնեայի այդ աղայամիտ սեթեւեթութեան վրայ։

— Ափսոս, լաւ կը կըլինէր, եթէ զրուէր անցադրի մէջ և այն թէ որքան մազ կայ գլխի վրայ... Ի՞նչ դատարկաբանութիւն... վերջ տուէր ձեր թեթեւութիւն յիմարութիւններին, ի սէր այլաչի. կամ ստորագրեցէք, Խուէր անցադիրը ինձ, կամ բացարձակապէս մերժեցէ՛ք՝ հաստատելով կեղծութիւնը։ Հակառակ դիպուածում՝ ես հարկադրուած կը լինեմ նորից անցնել սահմանը, դիմել սահմանազլխի Ռուսաց անցադրական գլխաւոր պաշտօնեային և յայտնել թէ ի՞նչպէս ուսուական օրինական անցադիրը մի ոմն պարսիկ դիտամբ աշխատում է աքօղել, կեղծել և նրա վրայ ստուեր ձգել, նոսմացնել, լաւ իմացէք, որ պատասխանատուութիւնը ծանր կը լինի... »

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍԵԱՆՑ

Շարայարեւի



## ՄԻ ԶԱՅՆ ԿՈՎԿԱՍՏՈՅ

ԹԻՖԼԻՍԻ «ԿՈՎԿԱՍԿԱՅԸ ԳՐԱԴԱՐԱՆԸ»

(Թանգիկ տեսութիւն)

1846 թւին մի քանի ուսու և հայ բանիմաց մարդիկ մտածում. են ժողովրդական՝ գրագրաւ բանալու մասին հոգալ։ Ժողովներ են աւում, խորում են և վերջապէս իրագործում է։

Պ. Աղամ Բերժէ, որ գործի գլուխն է լինում, ամբողջ տասնեւհինգ տարի շարունակ գրեք է հաւաքում և յաւելում է նրանց՝ կայսրութիւնից ձեռք բերել իրաւունք՝ գրագրաւ բանալու համար. Գրագրաւ բանալը — այն էլ 1861 թւին, մեծ քայլ կարելի էր համարել թիֆլիսի նման մի քաղաքի համար, որովհետեւ այդ ժամանակ թիֆլիսը գրեթէ կոմկապի մէջ այնքան մեծ տեղ բռնելիս չէ եղել։

Մեր նպատակը չէ շատ հեռուն գնալ, այլ հետաքրքրուողին առաջ ալ գրագրաւ թուցիկ հաշիւը, նրա գրեքի, գտնաւորութիւնների և քանակութեան մասին։

\* \*

Այս ահագին Գրագրաւ ունի երեք մեծ ծանաւոր գրեքի ցուցակներ, որոնք գրագրաւ նախնական գործերն են կազմում։ Այդ ցուցակների առաջին հատորում ամփոփւած է, կովկասում լոյս տեսած բոլոր գրեքի աւումներ՝ սկսած 1846 թ. մինչեւ 1861 թիւը, իմացաւորութեամբ Աղամ Բերժէի, որը մեծ ժողովրդականութիւն ունէր կովկասում իրեւ

\* Բաղամ-Աղամ (մարտ ամիս էլ 1841) ապւած արքայական բաւար յիւան է, պիտի լինի ժողովրդական։

“գինորական պատմագիր”, իրկորդ հաստ-  
րը 1866 թ. — 1880 թ. խմբագրութեամբ  
Գ. Միլերի, և երկրորդ հաստը՝ 1884 թւից  
մինչեւ 1894 թիւը, խմբագրութեամբ Պ.  
Է. Մեռլերի :

Այդ երեք հասար ցուցակները մէջ կան  
հետեւեալ լեզուներով տպւած գրքեր.

1. Հայերէն.
2. Գրաւորներէն.
3. Գերմաներէն.
4. Յունարէն.
5. Ռուսերէն.
6. Վրացերէն.
7. Տաւկերէն, և այլն :

Բացի այն՝ թիւ տպւած են այդ ցուցակ-  
ները 1864 թականից, այնու ամենայնիւ  
կան և գրանց մէջ 1700 թականից տպւած  
գրքերի անուններ :

\* \*

Գրադարանի ցուցակները (մի և նոյն է  
թէ՝ գրադարանը) բաժանուած են տասնեւհինգ  
գլխաւոր մասերի, պարզ ասած, ըստ դաս-  
ակութեան՝ թէ ո՞ր գիրքը ինչ գիտութեան  
է պատկանում :

1. Աստուածաբանական, — ունի նաեւ  
իր ճիւղերը. բաժանուած է վեց մասերի :
2. Փիլիսոփայական, — բաժանմունք  
չունի :
3. Իրաւագիտական, — բաժանմունք  
չունի :
4. Պատմական, — բաժանուած է եօթը  
մասերի :
5. Լեզագիտական, — բաժանուած է երեք  
մասերի :
6. Վիճակագրական, — բաժանմ. չունի :
7. Աշխարհագրական, — բաժանուած է 2  
մասերի :
8. Տնտեսական գիտութիւնք, — բաժան-  
ւած է 4 մասի :
9. Բնական գիտութիւնք, — բաժան-  
ւած է 5 մասի :
10. Բժշկական, — բաժան. 5 մասի :
11. Զանազանգիտական, — բաժան-  
մունք չունի :

12. Գրականական, — բաժանուած է 4  
մասի :

13. Հանրագիտական, — բաժանմ. չունի :

14. Պարբերական հրատարակութիւններ,  
— բաժանմունք չունի :

15. Խառնուրդ, — բաժ. չունի :  
Այս բոլորը կազմած է ուսերէն :

\* \*

Ամբողջ գրադարանը ունի 18, 220 գիրք  
կամ 33, 023 հատոր : Մեծ մասը կազմում  
է ֆրանսերէնը և ապա հայերէնը, թւով  
537 գիրք :

Մեր այս առաջ բերած գրքերի հաշիւն մին-  
չեւ 1894 թականին է, իսկ նրանից յետոյ  
մինչեւ այսօր՝ ոչ տպւած և ոչ ձեռագիր  
ցուցակ գոյութիւն չունի այդքանը. թէ ինչ է  
պատճառը, յայտնի չէ, միայն հաստատ գի-  
տենք՝ որ այս ամբողջ երեք տարւոյ ընթաց-  
քում՝ թէ հայերէն և թէ օտար լեզուներով  
մեծ քանակութեամբ գրքեր են լոյս տեսել,  
որ և անհրաժեշտ է ընթերցողների համար,  
գիտնալու դրա մասին. օտակայն Գրադարանը  
անտարբեր է դէպ այդ ամէնը :

\* \*

Գրքեր ստանում է աչ թէ մասնաւոր հե-  
ղինակներից կամ հրատարակիչներից, ինչպէս  
միւս գրադարանները, այլ ուղղակի գրաքըն-  
նական կոմիտեոյից : Կոմիտեոյն ստանում է  
կոյիլատում բոլոր լոյս տեսնող թէ գրքերից  
և թէ լրագիրներից 12 օրինակ, որից մի  
մի պիտակը պատճառապէս յատկացրած է այդ  
գրադարանին : Ուրեմն կոյիլատում լոյս տես-  
նող գրքերը այդ գրադարանը պարտաւոր է  
անմիջապէս պահպանել :

\* \*

Իբրեւ Ժողովրդական գրադարան ունի նաեւ  
շատ աղքատիկ ընթերցարան, թիւս ամօռ-  
ները շատ են (24 հատ) և սեղանները քիչ  
(2 հատ), իսկ պատահանները 6, (ուր կա-  
րելի է նստել), այնու ամենայնիւ հինգ օրի-

նակ լրացիր են ստանձում օգտագործարար խմբագրութեամբ, իսկ մնացածները, ինչպէս վերը յիշեցի, Գրաքննական կոմիտեայից ։

Խմբագրութիւններից ստացւած թերթերի *Ն Ն*-ները սեղան են հանուում, իսկ պաշտօնական տեղից ստացւած *Ն Ն*-ները պահուում են (երեւի խմբագրութեան ոչ թոյլատրած օրէնքով) ամուր, և չեն արուում յաճախողներին ։ Զախորպութիւն և Այս դէպքում ինչ անի խեղճ հայ ընթերցողը, երբ մեծամասն զրպարան է մտնում լոկ երկու չորսդիր կարգաւ յոյսով, իսկ ուսներ, վրացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ 3 չորսդիր յաւաքով Այս տեղից կարելի է եզրակացնել, որ կրկին խեղճ հայը աւելի մտաւոր պաշար կարող է բաժանալ, յայտնի լինելով նրան բոլոր լեզուները քան օտարը, որ բացի իր լեզուից, ոչ մի լեզու չգիտէ ։

Թող ների յարգելի ընթերցողը, որ հաշիւ չկարողացայ տալ վերը, սեղանի վրայ գտնւած աւտարիաների վերաբերեալ ։ Այս էլ պիտի ասեմ՝ որ սեղանի երկարութիւնը որոշական չափով 3 աստիճան է, կամ 6 արշին, այն է՝ թէ՛ երեք միջահասակ մարդիկ ձգեն այդ սեղանի վրայ, կը տակասի միայն կէս մարդու մարմինը, ուրիշ՝ եկեղեցում գտնւած ննջեցեալների սեղանի նման է ։ Այդ սեղանի վրայ գտնւում է մի քանի թանաքաժամ և մի քանի գրչակցութիւն, փառաւորապէս հին և մաշւած զրիչներով, (երեւի այսօր կամ վաղը կը հոգան այդ թանկագին իրերի մասին), և մի հնադարեան ջրաման իր բաժակով, ջրամանը միշտ դատարկ, և այլն ։ Եթէ երկարացնելու լինիմ՝ վերջ չի ունենալ, բայց կարող եմ հետեւեալ կարծիքը ցուցնել, որ մեր կրկին խեղճ հայկական գրապարանները աւելի բարեկարգ փնտկի մէջ են գտնուում, քան թէ այս ժողովրդական հարուստ զրպարանը, այնպէս որ հայկական գրապարանը գտնէ 4—5 լամպարներ ունի, իսկ այս հոյակապ գրապարանը (եթէ ծածկուելի չէ) գէթ մի կտաւած մոմ էլ չունի, որ դէպք պատահած ժամանակ կամ ամպած օրերին (որ կատարեալ խառն է տիրում) վառեն ։

Վերջապէս, ընթերցողին տալով այս գրա-

պարանի համառօտ նկարագրութիւնը, կարող է այն գաղափարը կայմել այս Գրապարանի վերաբերեալ, որ առ առելի վատարար որոշութեան մէջն է գտնուում, քան իշխանագին, մասնաւոր խեղճ մարդկանցով պահպանւած զրպարանը ։

Թէ և այս գրապարանը զրգրի կողմից հարուստ է, սակայն լրագրութիւններից բաւական զուրկ է և ոչինչ չէ կազմում ։

\*

Տարւոյ մէջ բնդ ամէնը՝ կանոնաւոր կերպով եթէ հաշուեալ լինինք, ինչու ամբողջ ամիսներ հազիւ բաց լինեն, և այն էլ օրական քանի՞ ժամ. 3 ժամ 5 ժամ, իսկ ամբողջ 4 ժամ. և այդ գրապարանը կոչուում է ժողովրդագրական, այն ինչ՝ բառի բուն նշանակութեամբ, ժողովրդական գրապարանը պիտի բաց լինի առնապէս 40 ժամ, որ քոնէ կարողանայ մասաւոր օգուտ քաղել և ֆիզիքապէս յոգնած բանուր-հասարակ մարդը ։

Այդի առաջ պիտի ունենալ և այն՝ որ գրապարանից զրգրի չեն արուում՝ տանը՝ ազատ ժամերին կարդալու համար ։

Այսպէս արեմն այդ գրապարանի արտաքինը գեղեցիկ է, իսկ ներքինը բնառ ոչ ։

Հ. ԲԱՅԻՐԻՐԱՆՑ

